80. արփիակերպ
81. բազկատարածութիւն
82. բուրվառամբարձեալ
83. գեղատխուր
84. դառնաճաշակ
85. երկրակշռութիւն
86. զանձայրափակ
87. զառեցեալ
88. զեռաւիրաշ
89. զուարճաբոյսք
90. Էացեալ
91. թեւասքողեալ
92. ինքնախորհող
93. լուսածին
94. կանխապատմութիւն
95. համաշխարհակործան
96. հոգեպայծառ
97. ճոխացուցիչ
98. միակնութիւն
99. առաքելախումբ
100. յեռանձնաթիւ
101. պարկեշտասանունդ
102. քառավտակ
103. քոյինակրօն

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ «ՀՈՂԴԱՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910-1914 ԹԹ.)

Մարիամ Յովսեփեան

«Հողդար» շաբաթաթերթը լոյս է տեսել Սեբաստիա քաղաքում 1910-1914 թթ.: Հրատարակուել է շաբաթ օրը եւ ունեցել է 4 էջ ծաւալ: Հիմնադիր խմբագիրը եւ արտօնատէրն ու տնօրէնը Կ. Ա. Պարսամեանն էր (1914 թ.՝ Հ. Մ. Փոլադը): Պարբերականը «Հողդար» էր անուանուել Սեբաստիայի Հողդար կոչուող բլրակի ստորոտում գտնուող համանուն թաղի անունով:

1910 թ. հոկտեմբերի 27-ի առաջնորդող խմբագրականում հաւաստիացուում էր, որ թերթը խորհրդանշելու էր սվազցիների հողը եւ հայութեան դարը[1]: Դա պիտի լինէր մի դարաշրջան, երբ հայը «գլուխ մը սոխի փոխարէն» չպիտի տար իր հողը եւ փարելով արօրին՝ պիտի չէնացնէր հայրենիքը[2]: «Հողդարը» փորձելու էր դտնել եւ ընթերցողներին ներկայացնել նախորդ բռնապետական շրջանում անգամ իրենց ազգօգուտ ձեռնարկներով աչքի ընկած անձանց: Թերթը պիտի աշխատէր ստեղծել «քաղքիս մէջ գէթ, երիտասարդութիւն մը՝ գործունէութիւնով, կեանքով առլի: Ան՝ պիտի փարի հողին մշակին հետ: Ան՝ պիտի փառաբանէ գործը ու գործաւորը: Ան՝ Վօլթէռի հետ պիտի երգէ՝

«Իմ աստուածս վաստակն է,
Որ այս աշխարհը կը վարէ»[3]:

Խմբագրակազմը ցանկանում էր «Հողդարը» դարձնել այնպիսի պարբերական, որի էջերում իւրաքանչիւր հայ կը գտնէր իր համար օգտակար որեւէ նիւթ: Խմբագրակազմը նաեւ հաւատում էր, որ կարողանալու էր յաղթահարել դժուարութիւնները եւ արգելքները, քանի որ լցուած էր պայքարի մեծ կորովով[4]:

«Հողդարը» ՀՅԴ համակիր պարբերական էր՝ գրեթէ պաշտօնաթերթի կարգավիճակով: Չկար որեւէ համար, որտեղ չլինէր որեւէ նիւթ ՀՅԴ Սեբաստիայի կոմիտէի այս կամ այն ձեռնարկի, որոշումների կամ որեւիցէ յայտնի դաշնակցական գործչի մասին: 1914 թ. «Հողդարի» դաշնակցական ուղղուածութիւնն ակնառու էր դառնում, եւ օսմանեան խորհրդարանի ընտրութիւնների թէժ շրջանում թերթը բացայայտ պաշտպանում ու գովազդում էր ՀՅԴ թեկնածուներին եւ դաշնակցութեան որդեգրած քաղաքական գիծը:

Հրատարակութեան 4 տարուայ ընթացքում «Հողդարը» կարողացել է պահպանել ազգային թերթի դիմագիծը եւ հիմնականում ունեցել է կրթական-մշակութային ուղղուածութիւն՝ բարձրաձայնելով արեւմտահայ դպրոցական համակարգի թերութիւնները եւ հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը համարելով ազգապահպանութեան հիմնական միջոցը: Այդ հիմնահարցերին էր նուիրուած պարբերականի խմբագրականների մեծ մասը, որոնք իրենց կայուն տեղն էին գտնում առաջին էջում:

«Հողդարը» առաջին եւ երկրորդ էջերում զետեղում էր դաւառահայ գրողների գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնները կամ տպագրում էր վերլու-

1 «Հողդար», Սեբաստիա, 1910, թիւ 1:
2 Նոյն տեղում:
3 Նոյն տեղում:
4 Նոյն տեղում:

ծական յօդուած, որում քննարկում եւ անդրադառնում էր որեւէ մշակութային միջոցառման: Քանի որ Սեբաստիայում բաւական ակտիւ էր թատերական կեանքը, բնականաբար պարբերականն անտարբեր չէր ներկայացումների եւ դերասանական խաղի հանդէպ:

3-րդ էջում տպագրում էին ազգային կեանքի այս կամ այն ոլորտից լուրեր, «ուր կը դատափետուին սխալներ, ուղիղին մարմաջը արթնցնելու ընթերցողին մէջ, կամ նոր կարգադրութիւն մը կը տարփողուի, կամ գիւղացիի մը ցաւը կը պատկերագրուի»[5]:

4-րդ էջում անդրադառնում էին կառավարական ու հասարակական-քաղաքական անցուդարձին լուրերի եւ հրապարակախօսական յօդուածների միջոցով:

«Հողդարի» խմբագրութիւնն առաջնահերթ կարեւորութիւն էր տալիս արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական խնդիրներին, թէեւ հասկանում էր, որ իր հրապարակումներով հիմնականում ձգտելու էր հասնել Սեբաստիայի հայութեան հիմնահարցերի լուծմանը: «Զենք ուզեր կեդրոնական կառավարութեանը դէմ պոռալ: Մենք կ'ուզենք գրել այնպիսի սխալի մը վրայ՝ որուն փոփոխութիւնը կախում ունենայ կուսակալէն»,- գրում էր թերթը[6]:

«Հողդար» շաբաթաթերթն ունէր հիմնական բաժիններ եւ խորագրեր: Դրանք էին՝ «Թաղային դպրոցներ», «Կեանքը շրջանին մէջ», «Հայ գեղերէն», «Տնտեսական կեանք», «Քաղաքապետարան», «Լուրեր», «Մանրալուրեր», «Թղթակցութիւններ», «Պոլիսէն հեռագրեր», «Տեղական լուրեր», «Ազգային լուրեր», «Քրոնիկ», «Շշուկներ», «Ստացուած գրքեր» եւ այլն:

Ա. ՏԱՐԻ ՀԱՄ. 27 1910 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԹԻՒ 1

ՀՈՂԴԱՐ

10 ՓԱՐԱ ՍԵԲԱՍՏԻԱ 10 ՓԱՐԱ

ՀՈՂ-ԴԱՐ

Եւ՝ ան պատմականացած վայրը, ուր, Սեբաստիոյ ու Հայոց թեան պատմութեան մէջ, Մխիթար Աբբայի-օրդանն է եղած.

Հող-Դարը մեծաւանդ, է, ան գաղը, հողին, որուն վրայ պատկերով մեծցած են ամէն մեխանքի ու կը մեծնան ապրիսկ Հող-Դարը է նաեւ ան գաղը Հայուն.

Ա՛յ հիմա գէթ, ուշադիր մի ամիսներ փոխարէն Հայը՝ չի պիտի տայ իր հողերը ու պտղերին փարելով իր աւարտին՝ չեզնիլ պիտի հայրենիքը.

Ա՛ւ կեդրոն, ան ուրուն, ուր վերանոր թիւնով մեծաւանդ աշխատելու գրանելով, պիտի ասեղծուի դարը ապին.

* * *

Ան ծանոթապատ թիւնն նոյնը, այ չի հասկացուն, արդեօք ընթերցողս թէ — ասա՛ղ, ընթերցո՛ղ իս բանս չէ վարուած դեռ՝ դատապարտի գրդոյը — ինչ խեղճութիւն պիտի ձգի մեր ՀՈՂ-ԴԱՐԸ.

Ան պիտի ոգի նկարելու անհնազանդ գէնքերու պարտը, բանակատարեան մէջ իսկ Պիտեր ու դրքեր են ոգեսակար դատանդ իրենց պատկանած ցեղէն.

Ան պիտի ձգի ուռնացնող հոգը դատանդ մեսա որական մշակին.

Ան՝ պիտի աշխատի ասեղծել քաղաքի մէջ գէթ, երեսատարդ թիւն մը՝ գործանելա թիւնով, կեանքի ապրիս

Ան՝ պիտի չարամարնէ հոգը, իր մեռնդն իսկ՝ հոգն ըլլալով. ան պիտի ոգեպատրեն, փարի հոգին, մշակին հետ.

Ան՝ պիտի փառասիրէ գործը ու գործատարը, ան՝ Պոլիսոյ հետ պիտի երգէ՝

«Իմ աստու ածս վաստակն է.

«Ես այս աշխարը կը փարի.

* * *

Ապագան վարդապետի կը սանաներ ու հետու. ենք յուսանս ըլլալ. ինչ — Չի կարծուի թէ՝ անմանամի ենք փոստ ոգեսիրուն անուշիին, ուր, ամենիսասանն կը մնաներ. Դիտե՛ք, որ, թանմիտ ան փառասիրներ պիտի աշխատին գիւղատարեալ մեր մարմանիները վերատալ.

Բայց պարտքերիս կրալ կա՛յ վերանոր.

Մենք բանանոր չենք մնար, ենք ինդրելով բանանոր չենք արանանորիր. մենք էր փոփոխիր որ մեր թերիներ անանի գրանելի գրատ.

Թղթակցութիւններն ու լուրերը ներկայացնում էին «Հողդարի» սեփական թղթակիցները: Նրանց նիւթերում ամփոփուած էին 1910-1914 թթ. արեւմտահայ գաւառում եւ մասնաւորապէս՝ Սեբաստիայում կատարուող դէպքերը, ազգային կեանքի պատկերը, արեւմտահայերին մտահոգող խնդիրները եւ նրանց ակնկալիքները «սահմանադրականացած» Թուրքիայում: Ի դէպ, «Հողդարը» «Շշուկներ» բաժնում տպագրում էր նաեւ քաղաքային կամ գաւառական անցուդարձի չճշտուած լուրերը, բայց ոչ բամբասանքները կամ սենսացիա պարունակող տեղեկութիւնները:

Այդ շրջանի արեւմտահայ քաղաքական միւս թերթերից «Հողդարը» տարբերւում էր յատկապէս իր գոյժերով կամ մահախօսականներով: Դրանք ամփոփուած էին «Տխրունի» խորագրի ներքոյ եւ հիմնականում ունէին երգիծական շեշտադրումներ, երբ գրւում էին «ազգային» գործիչների մահուան առիթներով:

5 Նոյն տեղում, 1911, թիւ 1:

6 Նոյն տեղում, 1910, թիւ 1:

Լրագրողական վարպետութեան առումով առանձնայատուկ էին «Քաղաքապետարան» բաժնի վերլուծական յօդուածները: Դրանցում բարձրաձայնւում էին քաղաքապետարանի աշխատանքներում նկատուած թերութիւնները եւ լրագրողական անհանդուրժողականութեամբ մերկացւում էին պաշտօնատար անձանց չարաշահումները: Այս բաժնում օպերատիւ կերպով ժողովրդին ծանօթացնում էին թէ՛ կառավարութեան, թէ՛ քաղաքապետարանի ընդունած նոր օրէնքներին եւ որոշումներին:

Ազգային կեանքի համար անչափ էական իրագործութեան կամ երեւոյթի մասին լուրը «Հողդարը» տպագրում էր «Կարեւոր» խորագրի ներքոյ:

Արեւմտահայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կեանքի լուրերը ներկայացւում էին «Քրոնիկ» բաժնում թղթակցութիւնների, ռեպորտաժների եւ վերլուծական յօդուածների միջոցով:

Ուշագրաւ էր «Ցիրուցան հայրենակիցներ» բաժինը: Այստեղ ներկայացնում էին այն սեբաստացիներին, ովքեր տարիներ առաջ հեռացել էին հայրենիքից, բայց կապուած էին նրան եւ օտարութեան մէջ պատուաբեր ու ազգօգուտ արարքներ էին գործում յանուն ծննդավայրի:

Հետաքրքրութեամբ էր ընթերցւում քաղաքական լրաքաղը, որտեղ ընդգրկուած տեղեկութիւններն ամփոփուած էին հիմնականում մէկ նախադասութեամբ: Նիւթերի մատուցման առումով սա նոյնպէս նորութիւն էր այդ շրջանի արեւմտահայ գաւառական մամուլի համար:

«Հողդարի» խմբագրակազմը փորձում էր անել ամէն հնարաւորը՝ հայութեանն իրեն կապելու, նրա ուշադրութիւնը գրաւելու ու այդպիսով՝ համազգային հիմնախնդիրները լուծելու նպատակով նրան համախմբելու համար:

Իր նպատակները «Հողդարը» կեանքի էր կոչում մի քանի նուիրեալ աշխատակիցների ջանքերով: Շաբաթաթերթում իրենց հրապարակումներով հանդէս էին գալիս Դ. Վարուժանը[7], Վահան Մոսկովեանը, Ա. Շահնուրը (Թոքատի թղթակիցն էր), Կարապետ Գաբիկեանը, Փայլակը, Գ. Գ-ն (Սիւասի թղթակիցն էր), Ա. Ալիսեանը, Յուսը, Գեւորգ Տէրոյենցը (Գ. Տ.), Զ. Միհրանը, Հ. Բալուցեանը, Միհրան Զուգասզեանը, Պողոս Մոզեանը:

«Հողդարին» մտահոգում էին Սեբաստիայի հայութեան սոցիալ-տնտեսական, քաղաքական հիմնախնդիրները, նրանց բարոյական եւ ազգային հոգեկերտուածքի խաթարման երեւոյթները, հոգեւոր հովիւների՝ իրենց կոչմանն անյարիր կեցուածքն ու պահուածքը եւ ազգային կրթօջախների հիմնահարցերը:

Տնտեսական խնդիրների մէջ առանձնայատուկ էին արեւմտահայ գիւղացիների հողազուրկ եւ շահագործուած իրավիճակը ներկայացնող նիւթերը: Ընդ որում՝ չէր թաքցւում, որ նրանք կրկնակի շահագործման էին ենթարկւում, բայց ցաւալին այն էր, որ հայ մեծահարուստներն ու Առաջնորդարանն էին տնտեսապէս վատ կացութեան մէջ գցում գիւղացիութեանը: Բերենք մէկ-երկու օրինակ:

«Քրոնիկ» բաժնի հեռագրերից մէկում Զարա գիւղի բնակիչ Միհրան Վարդանեանը տեղեկացնում էր, որ տարիներ առաջ 65 ոսկի էր տուել Առաջնորդարանին, որ կարողանար օգտագործել Քարհատում գտնուող ջրաղացը: Մ. Վարդանեանը բողոքում էր, որ ո՛չ ջրաղացն էին իրեն յանձնում, ո՛չ էլ տուած գումարն էին վերադարձնում: «Գործելակերպնիդ բռնակալական է»,- գրում էր նա[8]:

7 Դ. Վարուժանը «Հողդարի» խմբագրութեան «անձնական բարեկամն էր» (տե՛ս «Հողդար», 1910, թիւ 1):

8 Նոյն տեղում, 1911, թիւ 32:

«Հայ գեղերէն» բաժնում տպագրուած է Եարսարէնի քահանայ Գրիգոր Տոստուբեանի յօդուածը: Նա գրում էր, որ հայութիւնը 1908 թ. յեղաշրջումից յետոյ չէր կարողանում դրամով տիրանալ իրենից մինչեւ այդ «գրաւուած արտերին», թէեւ դա կառավարութեան որոշմամբ արդէն թոյլատրւում էր նրանց[9]: Ընդ որում՝ «գրաւուած շրջանին մէջ՝ կալուածատուրքն անգամ խեղճ հայէն կը գանձուէր»[10]: Տեսնելով, որ գրաւուած հողերի հայ սեփականատէրերը «սիրայօժար» վճարում էին պահանջուող գումարները՝ թուրք պաշտօնեաները սկսել էին դրամով էլ չվերադարձնել նրանց պապենական հողերը: Յօդուածագիրը Առաջնորդարանի ուշադրութիւնն էր հրաւիրում այդ թնջուկին[11] մոռանալով, որ այդ հոգեւոր կառոյցը Թուրքիայում չունէր նմանօրինակ հարցեր լուծելու իրաւասութիւն:

«Հողդարը» ծայրայեղութեան գիրկն էր ընկնում, երբ գրում էր, թէ Առաջնորդարանը շատ հեռու էր գիւղացիների իսկական բարիքը հասկանալուց[12]: Այդ մեղադրանքը կարելի էր տեղին համարել Սեբաստիայի ազգային մարմինների գործելակերպի կապակցութեամբ: «Ժողովրդին մօտենանք» խմբագրականում նշւում էր, որ հայ պաշտօնեաների մեծամասնութիւնը ապրում էր՝ չշփուելով ժողովրդի հետ եւ չիմանալով գիւղացիութեան խնդիրները: Շաբաթաթերթը դիմում էր կոչով, որ ժողովրդին ծառայելու համար անհրաժեշտ էր ապրել նրա հետ՝ շօշափելով նրա վէրքերը, լսելով նրա ձայնը եւ «ան ատեն ձեր վարձքը առած պիտի ըլլաք»[13]:

«Գիւղացուն ցաւերը» խմբագրականում արտայայտուած է «Հողդարի» այն համոզմունքը, որ գիւղացիութեան ցաւերը միայն անձնուիրութեամբ կարելի է դարմանել: Պահանջւում էին սրտացաւութիւն, եղած հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրութիւն ու դրանց լուծման անհրաժեշտութեան գիտակցում: Հիմնական բողոքն այն էր, որ աղքատ եւ սոցիալապէս վատ վիճակում գտնուող գիւղերի անունով հաւաքուած նպաստներն ազգային մարմինների կողմից յատկացւում էին այն գիւղերին, որոնց թաղականները Սեբաստիայի թաղականների «քիթը կը սրբեն՝ անուղղակի կերպով կաշառելով եւ հիւրասիրելով զանոնք»[14]: «Հողդարն» առաջարկում էր կարգել քննիչներ, որոնք գիւղէ գիւղ պտտուելով՝ ստուգումներ կ'անցկացնէին համայնքային բիւջէներում եւ վիճակագրութիւն կ'անցկացնէին գիւղացիների բուն կարիքների վերաբերեալ[15]: Եթէ Սեբաստիայի հայկական 30 գիւղից իւրաքանչիւրի համար դժուար էր մէկ ոսկի տրամադրել քննիչին որպէս աշխատավարձ, ապա Սեբաստիա քաղաքի հոդաբարձուների մէջ գուցէ կը գտնուէր ազդասէր անձնաւորութիւն, ով կը փակէր այդ գումարային ճեղքուածքը: «Հողդարի» կարծիքով՝ հիմնահարցի լուծման առաջարկուող տարբերակը գործնական էր ու կիրառելի[16]:

Որպէս ՀՅԴ համակիր մամուլի օրգան՝ «Հողդարը» ներկայացնում էր Սեբաստիայի բանուորների եւ յատկապէս՝ բանուորուհիների տնտեսական անձուկ կացութիւնը, շահագործուած վիճակը, որոնք անդրադառնում էին նաեւ նրանց առողջութեան ու արտաքինի վրայ: Շաբաթաթերթը լուսաբանում էր յօգուտ բանուորների ՀՅԴ-ի կազմակերպած միտինգները, եւ կոչ էր անում դիմել գործադուլի՝ իրենց, իրաւունքները պաշտպանելու համար: Օրինակ՝ «Հողդարը» Եէնի-Խան գիւղի բնակիչներին տեղեկացնում էր, որ Արեւելեան գորգի ընկերութիւնն այդ բնակավայրում բացելու էր մասնաճիւղ, եւ խորհուրդ էր տալիս գիւղացիներին նախքան աշխատանքի ընդունուելը՝ ծանօթանալ աշխատանքային պայմաններին ու հաշուի առնել «բանուորուհիների առողջական պարագան եւ նիւթական շահը»[17]: Մէկ այլ լուրով տեղեկացւում էր, որ ՀՅԴ Սիւասի կոմիտէն Սեբաստիայի կուսակալին բողոքագիր էր ներկայացրել գորգի գործարանատէրերի դէմ առ այն, որ նրանք «անլուր չարչարանքի» էին ենթարկում բանուորներին: Նշւում էր, որ մասնաւորապէս 6-9 տարեկան աղջիկներին չնչին աշխատավարձով աշխատացնում էին օրական 12-16 ժամ: Լուրի վերջում Կ. Պարսամեանը ողջունում էր ՀՅԴ-ի յիշեալ ձեռնարկը. «Ուրախ եմ սրտովին որ՝ այսօր կուսակցութիւն մը վրան կ'առնէ այս խիստ կարեւոր խնդիրը»[18]: Մէկ այլ նիւթում ներկայացւում էր ռեպորտաժ Ս. Նշանի վանքի անտառում ՀՅԴ գումարած միտինգից, որը նուիրուած էր բանուորուհիների շահագործմանը եւ ի պաշտպանութիւն նրանց արուող գործադուլների թեմաներին: Ելոյթներում ՀՅԴ գործիչներ Վահան Վարդանեանը եւ Վահան Մոսկովեանը քննադատում էին ցածր օրավարձը, գործարանատէրերի ամբարտաւանութիւնը եւ բանուոր-բանուորուհիների զրկանքը: Քննադատւում էր այն, որ այդ շահագործման հետեւանքով բանուորուհիները վերածուել էին քայլող կմախքների, նրանց մատները մմացել էին, դէմքերը գունաթափ էին, իսկ շրթունքներն՝ անարիւն: Կ. Պարսամեանը ողջունում էր ՀՅԴ-ի այդ միտինգը. «Կը շնորհաւորեմ դաշնակցութիւնն որ՝ իսկապէս ընկերվարական ըլլալու ձգտումը ունի՛ գէթ»[19]:

Բանուորական թեմային զուգընթաց՝ «Հողդարը» երկրի զարգացման գործում կարեւորում էր երկրագործութեան դերը: «Մոռացուած անհրաժեշտութիւն» երկմաս յօդուածում Ա. Ալիսեանը գրում էր, որ երբ գիւղացիութիւնը պատառելի դիրք ունենար, լինէր արտադրող ու իր արտադրանքը շահաւէտ կերպով իրացնող խաւ, այդ ժամանակ հայ աշխարհը կարող էր չվախենալ զանազան քաղաքական կռիւներից, քանի որ կարող էր ապահովել իր յաղթանակը: Սա էր «Հողդարի» տեսակէտը[20]: Շաբաթաթերթը դրական էր համարում Թուրքիայի երկրագործական նախարարութեան որոշումը, որով Սեբաստիայի մօտ գտնուող «Տիպար ագարակը» վերափոխուել էր երկրագործական գործնական դպրոցի: Այդտեղ կարող էին սովորել մինչեւ 30 տարեկան թէ՛ հայերը, թէ՛ թուրքերը[21]: Այդ դպրոցի տնօրէն Յակոբ Մինասեանը «Հողդար»-ում տպագրած յօդուածում պնդում էր, թէ գիւղացիներին անհրաժեշտ էր սովորել այդ կրթօջախում, որովհետեւ, հարստացնելով երկրագործական եւ գիւղատնտեսական դիտելիքները, նրանք հողից աւելի արդիւնք կը ստանային[22]:

«Հողդարը» փորձում էր մասնագէտների միջոցով նիւթեր տպագրել անասունների խնամքի եւ գիւղատնտեսական մթերքների պատրաստման մասին՝ այդպիսով հարստացնելով ընթերցողների գիտելիքները: Օրինակ՝ այդպիսի հանրամատչելի-ուսուցողական յօդուածներից մէկում Սեբաստիայի «Տիպար ագարակ» դպրոցի տնօրէն Հ. Մինասեանը սովորեցնում էր, թէ ինչպէս պիտի պատրաստել «գաշար»

9 Նոյն տեղում, 1911, թիւ 19:
10 Նոյն տեղում:
11 Նոյն տեղում:
12 Նոյն տեղում:
13 Նոյն տեղում, 1910, թիւ 4:
14 Նոյն տեղում, 1910, թիւ 2:
15 Նոյն տեղում:
16 Նոյն տեղում:
17 Նոյն տեղում, 1911, թիւ 43:
18 Նոյն տեղում, 1910, թիւ 5:
19 Նոյն տեղում, 1911, թիւ 29:
20 Նոյն տեղում, 1914, թիւ 42:
21 Նոյն տեղում, 1911, թիւ 46:
22 Նոյն տեղում:

կոչուող պանրի երկու՝ դաշտային եւ լեռնային տեսակները[23]:

«Հողդարը» ողջունում էր ՀՅԴ Սեբաստիայի «Կարմիր խաչ» կարուձեւի դպրոցում աշակերտուհիներին արհեստ սովորեցնելու նախաձեռնութիւնը: «Ահա երկու երեք տարի է որ ՀՅԴ աս ձեռնարկը կը պտղաբերի, կը յառաջանայ տարուէ տարի»,- գրում էր շաբաթաթերթը[24]: 1911 թ. մարտի 5-ին «Հողդարի» տպագրած լուրերից տեղեկանում ենք, որ ՀՅԴ կարուձեւի «Կարմիր խաչ» արհեստանոցի 18 շրջանաւարտուհի ստացել էր աւարտական վկայագրեր, իսկ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան կարուձեւի «Արաքս» արհեստանոցը նոյնատիպ վկայագրեր էր յանձնել 11 շրջանաւարտուհու[25]: 1911 թ. հոկտեմբերի 8-ին Սեբաստիայի Ազգային լսարանում աւարտական վկայականներ էր ստացել ՀՅԴ կարուձեւի «Կարմիր խաչ» արհեստանոցի 10 շրջանաւարտ: Վարպետուհին Սողոմէ Շահբազեանն էր. «Ամէն տեսակէտով կարժէ շնորհաւորել խնամակալութիւնը ու ՀՅԴ-ին»,- կարդում ենք այդ մասին տեղեկացնող նիւթում[26]: Այս կարգի նիւթերում շաբաթաթերթը բացայայտ քարոզում էր կարուձեւի արհեստին տիրապետելու անհրաժեշտութիւնը հայ օրիորդների համար:

«Հողդարի» հրապարակումներից պարզորոշ երեւում է, թէ որքան մեծ է եղել հայ մեծահարուստների եւ աղքատների ֆինանսատնտեսական բիւջէի տարբերութիւնը: Երբ 1911 թ. յունուար-փետրուարին անսովոր ցրտի պատճառով բազմաթիւ հայ մանկիկներ էին օրօրոցներում սառելով մահանում, մեծահարուստների տներում բարեկեցիկ կեանքը շարունակւում էր նոյն հունով[27]: «Տնտեսական վիճակը» յօդուածում բարոյական անկում էին համարում այն, որ հարուստների հոգը չէր, որ իրենց հարեւան աղքատ ընտանիքները «ճեղ մը փայտ չունին տաքնալու», այնինչ նրանց «վառարանին ծուխը չընդհատիր օրն ի բուն»[28]:

«Երբեմնի բարեկենդանք» խմբագրականում յիշատակւում էր այն փաստը, որ ժամանակին Սեբաստիայում հայ բնակչութիւնը եղբայրացած էր, միասին էին նշում տօները, իրար հիւրասիրում էին. «Որո՞ւն պատառը դուր վար կ'երթար՝ երբ մօտերնին ըլլար ընտանիք մը՝ որ բարեկենդանքին փայտ չունենար..., եղ չունենար, գինի չունենար»[29]: Հեղինակի համար անընդունելի էր, որ ժողովուրդը եսասէր եւ անզգայ էր դարձել աղքատի ցաւի ու կարիքի հանդէպ: Այնինչ, հեղինակի կարծիքով, երբ հարուստը սեղանակցում էր աղքատի հետ, նրան ցոյց էր տալիս, թէ «ինք ալ մարդ է, ու դրամը մեծկակ խրամ մը չէ իրենց յարաբերութեան միջեւ»[30]:

Ազգային նկարագրի խաթարման ու փոփոխութեան խնդիրը մշտապէս եղել է «Հողդարի» մտահոգութիւնների կիզակէտում, երբ մանաւանդ անդրադարձել է ժողովրդի տնտեսական ծանր վիճակին: «Ամուսնութիւնները» խմբագրականում, օրինակ, ընթերցողների ուշադրութիւն էր հրաւիրւում այն հիմնահարցի վրայ, որ քչացել էր կարիքաւորին օգնող, հանրային շահով ու ցաւով ապրող մարդկանց թիւը[31]: «Ուրիշին ցաւովը չենք համակուիր, ուրիշին հոգովը չենք տապկուիր: Երբ թշուառութիւն կը տեսնենք, կ'ըսենք. «Աստուած ինք ողորմի», այսինքն՝ կը ցաւիմ, բայց չեմ կրնար օգնել»,- գրում էր «Հողդարը»[32]:

23 Նոյն տեղում, 1912, թիւ 20:
24 Նոյն տեղում, 1911, թիւ 43:
25 Նոյն տեղում, 1911, թիւ 15:
26 Նոյն տեղում:
27 Նոյն տեղում, 1911, թիւ 14:
28 Նոյն տեղում, 1910, թիւ 5:
29 Նոյն տեղում, 1911, թիւ 14:
30 Նոյն տեղում:
31 Նոյն տեղում, 1911, թիւ 13:

Աղքատներին սպառնում էին ոչ միայն սովից, ցրտից մահանալը, այլեւ թաղման ծէսով այս աշխարհից չհեռանալը: «Հողդարը» պարբերաբար ներկայացնում էր, թէ ինչ բարոյական անկում էին ապրել քահանաներից շատերը, ովքեր չէին գնում աղքատների թաղման ծէսը կատարելու, որովհետեւ փոխարէնը չէին վարձատրուելու: Ժողովուրդը ծեծում էր նման քահանաներին: «Իրաւունք ունի ժողովուրդը: Ալ անտանելի են դարձած սա քահանաները»,- կարդում ենք թերթում[33]: «Հողդարը» տեղեկացնում էր, որ Սեբաստիայի հոգեւոր առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսն իր պահուածքով վատ օրինակ էր տալիս թեմի հոգեւորականներին: Նա 8 ամիս լքել էր իր թեմը՝ Սանասարեան վարժարանի մասնաճիւղը Սեբաստիայում բացելու խնդրի լուծման պատճառով[34]: Դրա հետեւանքով բարձրթողի էին մնացել թեմի գործերը: Գաւառական երեսփոխանական ժողովում նոյնիսկ բարձրացնում էին Թորգոմ եպիսկոպոսի աշխատանքի թերացման ու հրաժարականի հարցը[35]: Փաստենք, սակայն, որ «Հողդարն» ազգային-եկեղեցական գործերի աննախանձելի վիճակի համար միայն Թորգոմ եպիսկոպոսին մեղադրելը սխալ էր համարում, թէեւ գտնում էր, որ նա հարկ եղած դէպքում պահանջուող վճռականութեամբ հանդէս չէր գալիս[36] եւ «աղայական հոսանքէ քշուած կ'երեւի»[37]:

Առկայ տնտեսական խնդիրների լուծումը «Հողդարը» կապում էր մի կողմից՝ արեւմտահայերի քաղաքական իրաւունքի վիճակի, միւս կողմից՝ ազգային եւ պետական կառոյցների չգործելու եւ ամէն ինչ ականջի ետեւ դցելու հանգամանքների հետ: Օրինակ՝ Սեբաստիայում 1910-1912 թթ. դաժան ու ցուրտ ձմեռներ էին, բայց վերոյիշեալ մարմինները ոչինչ չէին ձեռնարկում աղքատ կամ ոչ բարեկեցիկ ընտանիքների համար գոնէ կեցութեան տանելի պայմաններ ապահովելու ուղղութեամբ: Այս թեմայով «Հողդարը» քննադատական յօդուածները տեղադրում էր «Քաղաքապետարան» բաժնում: Դրանցից մէկում ներկայացւում էր ժողովրդի սոցիալական «տաժանելի» դրութիւնը[38]: Ցուրտը չէր կոտրւում, վառելափայտը շատ թանկ էր, իսկ Սեբաստիայի քաղաքապետութիւնը չէր ընդունում այն առաջարկը, որ հայկական Պաղչեճիկ գիւղի մօտ գտնուող հանքահորից ժողովրդին թոյլ տային հանքածուխ փորել-հանել եւ այն օգտագործել իրենց տները տաքացնելու համար: «Քաղաքապետութիւնը միշտ անտարբեր՝ ո՛չ նպաստաւոր առաջարկները կ'ընդունի, ո՛չ ալ ինք ձեռներէցօրէն կը հայթայթէ ածուխը»,- գրում էր թերթը[39]: «Հողդարի» կարծիքով՝ եթէ քաղաքապետութիւնը եւ ազգային մարմիններն ընտրւում էին ժողովրդի կողմից, ուրեմն պիտի ծառայէին նրան, իսկ կոնկրետ դէպքում քաղաքապետութիւնը պիտի որոշում կայացնէր հանքածուխի գործածութեան ժողովրդականացման ու քաղաքատիպ աւանների փողոցներում լուսաւորութեան ցանց անցկացնելու մասին: «Հողդարը» յիշատակում էր Սիւասը, որը դարձել էր «մթնցած քաղաք. ո՛չ մէկ կանթեղ, ո՛չ մէկ ճրագ՝ էն բանուկ փողոցին մէջ իսկ», եւ դա այն դէպքում, երբ լոյսի ու լուսաւորութեան դար էր քաղաքակիրթ աշխարհում[40]:

32 Նոյն տեղում:
33 Նոյն տեղում:
34 Նոյն տեղում, 1912, թիւ 25:
35 Նոյն տեղում, 1912, թիւ 22:
36 Նոյն տեղում:
37 Նոյն տեղում, 1911, թիւ 29:
38 Նոյն տեղում, 1910, թիւ 7:
39 Նոյն տեղում:
40 Նոյն տեղում:

«Հողդարը» չի ներկայացրել այս կամ այն բնագաւառի միայն դատապարտելի երեւոյթները, այլ արձագանքել է իւրաքանչիւր ազգօգուտ ձեռնարկի եւ պետական կեանքում կատարուող ցանկացած դրական տեղաշարժերի: Թերթը լուսաբանում էր երկրի տնտեսութիւնը զարգացնելու միտումով հանրօգուտ շինութիւնների նոր թափով սկսուած աշխատանքները եւ Սեբաստիայում ճանապարհաշինութեան գործում գրանցուող արդիւնքները: Պարբերականից տեղեկանում ենք, որ 1911 թ. Սեբաստիայի տարածաշրջանում տնտեսութեան առաջընթացին նպաստելու նպատակով «աւագ» կարեւորութիւն էին տալիս երկաթգծերի շինարարութեանը Սամսոն-Սիւաս, Խարբերդ-Սվազ, Սամսոն-Ամասիա ուղղութիւններով[41]:

«Հողդարը» բերում էր մի շարք օրինակներ, որոնցով կարծես ձգտում էր ընթերցողներին հաւաստիացնել, որ ազգային դիմագծից շեղումները եւ բարոյական անկման դրսեւորումներն ամէն դէպքում տեսակարար կշիռ չէին կազմում, ու քրիստոնէական վարքագիծը մնում էր բնորոշ մեր ժողովրդի համար: Այս առումով բնութագրական է թերթի՝ Զիլէի մասնաւոր թղթակցի լուրը, որը զետեղուած է 1911 թ. փետրուարի 19-ի համարի «Թղթակցութիւններ» բաժնում[42]: Պարզւում էր, որ մէկ ամիս էր, ինչ անտանելի ցուրտ էր, եւ օրօրոցներում ցրտից սառել էին երեխաներ, իսկ քութէշից օրական մահանում էր 7-8 մանկիկ: Այս պայմաններում գովելի էր թաղապետական բժիշկ Արմենակ Սեբայդարեանի պահուածքը: Նա անվճար էր բուժում աղքատներին: Քաղաքի անձնուէր մեծահարուստներից մահտեսի Յովակիմ Զալլազեանը, Ղազար Ասատուրեանը եւ մի քանի «ուրիշներ ալ» հանգանակութիւն էին արել ու փայտ, ածուխ եւ ուտելիք էին գնել ու բաժանել Զիլէի կարօտեալ ընտանիքներին: «Երբ Ազգային օգտակար մէկ ձեռնարկին համար իրենց դիմում ըլլայ՝ քսակնին լայն կը բանան, անձնուիրութիւնով կ'օժանդակեն»,- վկայում էր շաբաթաթերթի թղթակիցը:[43]

Բարեգործութիւններով Սեբաստիայում յայտնի էին քաղաքի ամերիկեան հիւանդանոցի բժիշկ Լեւոն Սիւնին եւ նոյն հիւանդանոցի դեղագործ Արտաշէս Այվազեանը: Նրանք մշտապէս այցելում էին գիւղեր եւ անվճար բուժում էին տեղի տառապեալ ու աղքատ ժողովրդին[44]: Թերթը տեղեկացնում էր, որ բժիշկ Լեւոն Թորգոմեանը 3 դարմանատուն էր բացել. առաջինը՝ Սեբաստիայի ազգային հիւանդանոցում, երկրորդը՝ Բրգնիկ, երրորդը՝ Դաւռա գիւղերում[45]: Բարեսիրական ձեռնարկներով աչքի էին ընկնում յատկապէս Սեբաստիայի ազգային հիւանդանոցի ղեկավարութիւնն ու աշխատակիցները: Բուժքոյրերից մէկը՝ Յասմիկ Թօփալեանը, տիֆով վարակուել էր իր կողմից խնամուող հիւանդից եւ մահացել էր[46]: Թերթը գրում էր, որ ազգային հիւանդանոցը «անդէրներու դէրը, աղկաղկներու ապաստանը է եղած»[47]: Աղքատիկ բիւջէի պայմաններում, որը հնարաւորութիւն չէր տալիս 2 բժիշկ ունենալ հիւանդանոցում, այդ հաստատութեան միակ բժիշկ Արթին Շիրինեանը, անգամ 30 հիւանդ լինելու պարագայում, հասցնում էր բուժել թէ՛ նրանց, թէ՛ հիւանդանոցից դուրս գտնուող հիւանդներին: Հիւանդանոցն ունէր դեղատուն եւ դեղագործ՝ Սահակ էֆենդին: 1910 թ. յուլիսի մէկից մինչեւ 1911 թ. մայիսի 31-ն ազգային հիւանդանոցում խնամուել ու բուժուել էր 521 հիւանդ, որոնցից 370-ն

41 Նոյն տեղում, 1911, թիւ 34:
42 Նոյն տեղում, 1911, թիւ 14:
43 Նոյն տեղում:
44 Նոյն տեղում, 1912, թիւ 4:
45 Նոյն տեղում:
46 Նոյն տեղում, 1912, թիւ 5:
47 Նոյն տեղում, 1911, թիւ 35:

աղքատ մարդիկ էին[48]: 521 հիւանդից բուժուել էր 373-ը, 67-ը կիսաբուժուած էր, 42-ը համարուել էր անբուժելի, իսկ 39-ը մահացել էր: Հիւանդների թւում էին նաեւ շրջակայ քաղաքներից ու գիւղերից Սեբաստիայում գտնուող պանդուխտներ, որոնց հիւանդանոցում խնամել ու բուժել էին ընտանեկան հոգածութեամբ: Հիւանդանոցից հեռանում էին՝ օրհնելով բուժանձնակազմին. «Միշտ աւելի փարինք հիւանդանոցին, նուիրուինք անոր»[49]:

«Հողդարը» գրում էր, թէ «դպրոցէն աւելի ո եւ է հայ սիրով կը նուիրէ իր լուման հիւանդանոցին»[50]:

«Հողդարը» իրաւացիօրէն մատնանշում էր, որ Սեբաստիայում սիրայօժար էին գումար յատկացնում դպրոցական գործին զարկ տալու նպատակով: Օրինակ՝ «Դպրոցական ֆոնդ յանուն Զաւարեանի» թղթակցութեան մէջ տեղեկացւում էր, որ ՀՅԴ «Օգնենք Սասունին» յանձնախումբը հիմնել էր Զաւարեանի անունով հիմնադրամ, որը նպաստելու էր Սասունի ու Տարօնի գիւղերի կրթական մակարդակի բարձրացմանն ու գիւղացիների աշխատանքային պայմանների բարելաւմանը[51]: Միեւնոյն ժամանակ պարբերականը շարունակ քննադատում էր կրթական ոլորտում նկատուող բացերը: Հիմնականում դժգոհութիւններն ուղղուած էին Ուսումնական խորհրդի գործունէութեանը եւ ազգային կրթական կառոյցների անբարեխիղճ աշխատանքը շտկելու նպատակն էին հետապնդում: «Խմբագրական խնդրանք» նիւթում դիմում էին այդ մարմիններին եւ մասնաւորապէս Ուսումնական խորհրդին, որ իրենց յարափոփոխ ծրագրերով ազգային դպրոցները «խառնշտկելուց» դադարեն եւ խմբագրութեանը չպարտաւորեցնեն մշտապէս իրենցով զբաղուել. «Մենք գրելիքներ չա՞տ ունինք»[52]:

«Հողդարը» պնդում էր, որ Ուսումնական խորհուրդը պիտի ունենար գիտակ եւ «ազգին հոգովը իրապէս տապկուող» անդամներ, որոնք ազգային վարժարաններին պիտի տային «անանկ ուղղութիւն մը, որ տոհմային ըլլար»[53]: Այնինչ, թերթի հրապարակումների համաձայն, նոյն օրերին Սեբաստիայի ազգային մարմինները իրենց ժողովներում զբաղուած էին անձնական շահերի բախումներով. «Կը զբաղին նիւթերով՝ որոնք ո եւ է առնչութիւն չունին Ազգային իրական կարիքին հետ»[54]: «Հողդարը» զգաստացման կոչով էր դիմում նրանց, որ այդ «սոսկումի պահին», երբ օսմանեան խորհրդարանում քննարկում էին հայոց ազգային վարժարանները Պատրիարքարանի իրաւասութիւններից հանելու եւ պետական համապատասխան մարմինների հսկողութեան տակ դնելու հարցերը, նրանք չզբաղուէին կեղծ ազգասիրութեամբ[55]: Զիլէի մասնաւոր թղթակիցը, օրինակ, գրում էր, որ իրենց դպրոցը ողորմելի վիճակում էր. «Գիտութիւն՝ գրեթէ չկայ, մաթէմաթիքը՝ տկար: Զեւագիտութեան պէս կարեւոր դաս՝ չունին: Տղաքները գաւազանով կը պատժուին: Աշակերտները շատ ծանրաբեռցուած են»[56]: Կրթօջախը չունէր հոգաբարձութիւն: Զէյթունում ուսուցչական ժողովներ: Տեսուչն ասում էր, թէ ինքն էր դպրոցի «կենդանի ծրագիրը»[57]: Այսպիսի վիճակ էր տիրում Սեբաստիայի տարբեր կրթօջախներում:

48 Նոյն տեղում:
49 Նոյն տեղում:
50 Նոյն տեղում:
51 Նոյն տեղում, 1914, թիւ 42:
52 Նոյն տեղում, 1910, թիւ 1:
53 Նոյն տեղում, 1911, թիւ 11:
54 Նոյն տեղում:
55 Նոյն տեղում:
56 Նոյն տեղում, 1911, թիւ 16:
57 Նոյն տեղում:

«Հողդարն» առաջարկում էր, որ ազգային վարժարաններն իրենց ծրագրերով եւ նպատակներով տարբերուէին օտար վարժարաններից եւ իւրաքանչիւր սանի մէջ զարգացնելով անհատականութիւնը՝ այնպէս կազմակերպէին ուսումնական գործընթացը, որ աշակերտների մէջ «հայը շեշտուի»[58]:

«Տոհմային դաստիարակութիւն» խմբագրականում նշում էին եւս մէկ բաց. Սեբաստիայի ազգային վարժարանները խախուտ հիմքերի վրայ էին դրել մայրենի լեզուի ուսուցումը եւ լաւ չէին սովորեցնում «տոհմային լեզուն՝ հայերենը»[59]: Կիլիկիայից ստացուած թղթակցութիւններից մէկում տեղեկութիւն կար այն մասին, որ տեղի հայկական մի քանի գիւղերում (Եափալթուն, Լեսանլը, Ղարակեօլ, Պուրհան, Տենտիլ, Թեքմէն, Զեպտնի եւ այլն) կարօտ էին կրթական տեսչի եւ առաջնորդի, իսկ կոնկրետ Սարը-Օղլան հայկական գիւղում կային մանուկներ, որոնք «տակաւ կը մոռնան Մայրենի լեզուն»[60]: Այդ գիւղի քահանան դժգոհող ծնողներին հանգստացնում էր՝ ասելով, թէ կարիք չկար, որ նրանք սովորէին հայերէն գրել-կարդալ[61]: Նոյն թղթակցութեան մէջ բերւում էր նմանատիպ մէկ այլ՝ Պլենեան-Համիդ գիւղի օրինակը: Այստեղ բնակւում էին 50-60 տուն հայեր, բայց դպրոցը գտնւում էր նկուղում, չունէր սեղան-աթոռներ, իսկ աշակերտները, հողէ յատակին նստած, մէկ դասագրքից 4-5 հոգով օգտուելով էին սովորում դասերը[62]: Կիլիկիայի հայկական այդ եւ մի շարք այլ գիւղերի դպրոցների «անկերպարան, անմեթոդ» վիճակի համար անողոքաբար մեղադրում էր թաղականներին եւ վեղարաւորներին, որոնք «ոչինչ կ'ընէին կրթական տեսակէտով, չէին ալ հետաքրքրուէր՝ գրեթէ»[63]: Օրինակ էր բերւում հայաշատ Կեմերեկ գիւղը, որը տարիներ շարունակ չունէր առաջնորդ եւ հարեւան հայկական գիւղերի հետ ապրում էր մեկուսացած ու լճացած կեանքով[64]:

Կրթական ոլորտի թերութիւնները քննադատելու եւ բացերը մատնանշելու գործում առաջամարտիկ էր «Հողդարը»: Այդ յօդուածներից մէկում այնքան տեղին ու սուր էին Սեբաստիայի Ուսումնական խորհրդի ատենապետ Պայտար Միւֆետտիշիի հակակրթական գործունէութիւնը մերկացնող դիտողութիւնները, որ վերջինս խուլիգանական յարձակում էր կազմակերպել շաբաթաթերթի խմբագիր Կ. Պարսամեանի վրայ[65]: «Քո անձին եւ ազատ խօսքի եւ գրչի օրկանի խմբագրի վրայ կատարուած այս վայրենի ու կոպիտ ընթացքը անորակելի է»[66],- գրում էր Փայլակը Կ. Պարսամեանին ուղղուած նամակում: Նա պնդում էր, որ Կ. Պարսամեանն Ուսումնական խորհրդի ատենապետին քննադատել էր իրաւացիօրէն, ինչի համար Պ. Միւֆետտիշին իրաւունք չունէր նրա վրայ «համիտավայել» ձեւով յարձակուել[67]:

«Հողդարի» հրապարակումներից պարզորոշ երեւում էր, որ Ուսումնական խորհուրդն իր ղեկավար կազմով կարծես խրախուսում էր «տերթոդիկեան» մեթոդը: Օրինակ՝ այդ կառոյցի ատենապետերից Այվազեանը գանկոծել էր Արամեան վարժարանի սանուհի Աննա Բասմաջեանին նրա դասընկերուհիների ներկայութեամբ: Այդ միջադէպի առիթով «Հողդար»-ի թղթակիցը գրում էր հետեւեալը. «Մատներս ալ դողդղալ սկսան: Մարդ կրնայ եղեր ասչափ անզգայանալ, եւ եթէ

58 Նոյն տեղում, 1911, թիւ 9:
59 Նոյն տեղում:
60 Նոյն տեղում, 1911, թիւ 10:
61 Նոյն տեղում:
62 Նոյն տեղում:
63 Նոյն տեղում, 1911, թիւ 9:
64 Նոյն տեղում:
65 Նոյն տեղում:
66 Նոյն տեղում:
67 Նոյն տեղում, 1911, թիւ 11:

աս ալ նկատի չառնէ քաղաքականը, զինքն ալ մեղսակից պիտի նկատենք աս արարքին ԱՊՕՐԻՆԻ, ԱՆԿԻՐԹ ու ԱՆՄԱՐԴԱՎԱՅԵԼ»[68]:

«Հողդար»-ի հրապարակումները նպաստում էին կրթական ոլորտի բարեփոխումներին եւ դրական տեղաշարժերին Սեբաստիայի կրթօջախներում: 1911 թ. «Քրոնիկ» բաժնում պարբերականը տեղեկացնում էր, որ տեղի տալով 1911 թ. թիւ 27-ում իրենց բերած այն փաստերին, թէ զեղծարարութիւնների հետեւանքով ամիսներ շարունակ չէին վճարւում ուսուցչական կազմի աշխատավարձերը, Քաղաքական ժողովը կազմալուծել էր Վանական խորհուրդը, թէեւ ոչ բոլոր անդամներին էր հեռացրել[69]: Թերթը կարծում էր, որ ձեռնարկուած միջոցները բաւական չէին: «Մենք կը պահանջենք անուններ, մենք կը պահանջենք թիւեր, մենք կը պահանջենք պատիժներ»,- գրում էր «Հողդարը»:[70] Թերթը Քաղաքական ժողովից պահանջում էր լինել անվերապահօրէն խիզախ եւ չքօղարկել վէրքերը, ապա թէ ոչ պահանջելու էր, որ Քաղաքական ժողովի անդամներն անէին հանգանակութիւն եւ հաւաքուած գումարով վճարէին ուսուցիչների աշխատավարձի պարտքը[71]:

«Հողդարը» կողմ էր ազգային հանգանակութեան անցկացմանը յօգուտ դպրոցների: «Կրթական երեւոյթներ» խմբագրականում, օրինակ, պարբերականը յիշեցնում էր, որ Գաբրիէլ քահանայի կազմակերպած հանգանակութեան շնորհիւ էր ժամանակին կառուցել Արամեան վարժարանի շէնքը[72]: «Գերագոյն ճիգ մը չենք ըներ՝ քաղաքիս կրթական գործին համար: Զենք ձեռնարկեր Մեծ հանգանակութիւն մը ի նպաստ դպրոցին»,- դժգոհում էր «Հողդարը»[73]: Թերթը տեղեկացնում էր, որ Սեբաստիայի Ազգային դպրոցում տեղի ունեցած արհեստաւորների ներկայացուցիչների ժողովում այդ կրթօջախի բիւջէի բացը փակելու նպատակով հաստատուել էր կրթական տուրք, քանի որ մինչ այդ դպրոցը չունէր «միօրինակ, չափուած, ձեւուած որ եւ է պիւտճէ»[74]:

Հանգանակութիւնից բացի, «Հողդարը» առաջարկում էր ազգային վարժարաններում կրթութիւնը դարձնել ձրի եւ քննադատում էր, ասենք, Արամեան վարժարանի ղեկավարութեանը, որ եռօրեայ վերջնաժամկէտ էր տուել աշակերտներին ամսավճարը մուծելու եւ վարժարանից չհեռացուելու համար[75]: «Աշխատինք կրթութիւնը ՁՐԻ տալ հայ աշակերտներին. աս թող ըլլայ մեր մտածումը, մեր ձգտումը: Անչափ կարօտ ենք մենք ուսման, առաջացման, զարգացման: Ըլլային նաեւ ձրի հրատարակութիւններ, որ հայը գէթ ինքնաբերաբար ընտելանար կարդալուն»,- գրում էր թերթը[76]: Մէկ այլ՝ «Կիրակնօրեայ վարժարանի վարիչներու դէմ» յօդուածում «Հողդարն» առաջարկում էր ուսումը ոչ միայն ձրի դարձնել, այլեւ՝ պարտադիր[77]: Այս խնդրի լուծումը շաբաթաթերթը համարում էր իր «աւագ պարտականութիւնը»[78]: «Աս առանցքին վրայ բեւեռելու ենք մեր ամբողջ եռանդը, մեր ուժը, մեր զոհողութիւնը»,- գրում էր «Հողդարը»[79]:

Ձրի եւ պարտադիր ուսուցումը շաբաթաթերթն առաջարկում էր իրականացնել համատեղ ջանքերով մշակուած միօրինակ ուսումնական ծրագրով շրջանի բոլոր հայ-

68 Նոյն տեղում, 1910, թիւ 2:
69 Նոյն տեղում, 1911, թիւ 32:
70 Նոյն տեղում:
71 Նոյն տեղում:
72 Նոյն տեղում, 1911, թիւ 37:
73 Նոյն տեղում:
74 Նոյն տեղում, 1910, թիւ 6:
75 Նոյն տեղում, 1911, թիւ 49:
76 Նոյն տեղում:
77 Նոյն տեղում 1912, թիւ 31:
78 Նոյն տեղում:
79 Նոյն տեղում:

կական դպրոցների համար: Այդ գաղափարը թերթում հրապարակած իր բաց նամակում պաշտպանում էր նաեւ Կովտունի Ազգային վարժարանի տնօրէն Ա. Երանոսեանը[80]: Նա պնդում էր, որ ծրագրի կատարման ընթացքը պէտք է վերահսկուէր շրջիկ տեսչի կողմից[81]: Պարբերականի էջերում Ա. Ալիսեանն իր հերթին առաջարկում էր նոր ուսումնական ծրագրում մեծ տեղ յատկացնել ֆիզիկական կրթութեանը. «Առողջ մտքի հետ առողջ բազուկ պէտք է»[82]:

1914 թ. «Հողդարը» գրեթէ բոլոր համարներում բարձրացնում էր Սեբաստիայում կրթական ընդհանուր վերատեսուչ ունենալու խնդիրը: Պարբերականը դա համարում էր օրուայ ամենայայժմէական հարցերից մէկը, որի լուծման գործում պիտի ընդգրկուէր Սեբաստիայի ողջ համայնքը[83]:

«Հողդարը» կրթական խնդիրների լուծման գործում Ուսումնական խորհրդի եւ ազգային պատկան կառոյցների աշխատանքը բարելաւելուն զուգընթաց կարեւորում էր ազգանուէր անհատների, այդ թւում՝ հոգեւորականների եւ հոգեւոր Առաջնորդների գործունէութիւնը: Շաբաթաթերթում բազմիցս հանդիպում ենք ազգային դպրոցներին յատկացուող դրամական նուիրատուութիւնների մասին տեղեկացնող նիւթերի: Օրինակ՝ «Քրոնիկ» բաժնում յայտնում էին, որ թիֆլիսաբնակ Թամարա Ղուկասեանը մահուան շեմին 1,5 միլիոն ռուբլի էր կտակել Կ. Պոլսի Պատրիարքարանին, որպէսզի իր հայր Աւետիս Ղուկասեանի յիշատակին Արեւմտեան Հայաստանում հիմնէին հայկական համալսարան[84]: Շաբաթաթերթը հանդէս էր գալիս հարցադրումով, թէ երբ պիտի արեւմտահայերի մէջ ցանկութիւն արթնանայ, փոքրիկ նուիրատուութիւններից բացի, «մէյ-մէկ չո՛ր տուն կամ խանութ կտակել կրթական գործին»[85]:

Կրթական խնդիրների կանոնակարգման եւ այդ ոլորտի հովանաւորման խնդիրներով զբաղուող հոգեւորականներից «Հողդարն» առանձնացնում էր երկուսին՝ Սեբաստիայի հոգեւոր առաջնորդի փոխանորդ Սահակ վարդապետ Օդաբաշեանին եւ Թոքատի նորընտիր «գործունեայ, խիզախ»[86] հոգեւոր առաջնորդ Շաւարշ ծայրագոյն վարդապետ Սահակեանին: Հոգեշնորհ հայր Սահակն իր փոխանորդութեան տարիներին Սեբաստիայում հիմնել էր Զեւագիտական դպրոց-լսարան: Նա այդտեղ ցանկանում էր բացել ընթերցարան, բայց Քաղաքական խորհրդի «ստորին պայքարը դանեցուց զինքը, ու ձգեց պաշտօնը»[87]: Սահակ վարդապետ Օդաբաշեանը մկների կրծոցներից փրկել էր Սեբաստիայի վանքի նկուղներում պահուող բազմաթիւ ձեռագրեր: Դրանք նա Կարապետ Գաբիկեանի հետ կանոնաւոր կերպով դասաւորել էր վանքի գրադարանում[88]: Հոգեշնորհ հայր Շաւարշը հիմքերի վրայ էր դրել Խորսանայի 200 երկսեռ աշակերտութիւն ունեցող դպրոցական գործը եւ լուծել էր դպրոցի կառուցման հարցը[89]: Խորսանայի թղթակիցը դիմում էր այլ վայրերում գտնուող խորսանացի պանդուխտներին, որ նրանք հանգանակէին 200 ոսկի՝ դիւղի նոր դպրոցի կառուցմանն օժանդակելու համար. «Մենք որ 150 տնուոր գեղ մենք, մեզ համար դպրոց մը չունենալ ստուգիւ ամօթ է»[90]:

80 Նոյն տեղում, 1914, թիւ 41:
81 Նոյն տեղում:
82 Նոյն տեղում:
83 Նոյն տեղում, 1914, թիւ 42:
84 Նոյն տեղում, 1911, թիւ 13:
85 Նոյն տեղում:
86 Նոյն տեղում, 1911, թիւ 40:
87 Նոյն տեղում, 1911, թիւ 9:
88 Նոյն տեղում:
89 Նոյն տեղում:
90 Նոյն տեղում:

«Հողդարը» Սեբաստիայում կրթական գործին խթանելու գործում առաջնային էր համարում հայ համալսարանական ուսանողների միութեան գործունէութիւնը[91]: Թերթը տպագրել էր այդ կազմակերպութեան կանոնադրութիւնը, ողջունելի ձեռնարկ համարելով միութեան հիմնումը՝ ձգտել էր ամէն կերպ աջակցել[92]: «Հողդարը» ուշադրութեան կենտրոնում էր պահում նրանց միջոցառումները եւ առիթը բաց չէր թողնում այդ միութեանը խրախուսելու համար: Օրինակ՝ «Հայրենակից ուսանողները» խմբագրականում շաբաթաթերթը բարի երթ էր մաղթում հայրենիք վերադարձող արդէն շրջանաւարտ դարձած սեբաստացի ուսանողներին, որոնք իրենց պարծանքն էին. մէկը դեղագործ էր, միւսն՝ անասնաբոյժ, երրորդը՝ երկրագործ, չորրորդն՝ իրաւաբան, հինգերորդը՝ բժիշկ եւ այլն: Նրանք «այժմէն իսկ սկսած են մեր մտաւորականներուն մէջ փողփողիլ»[93]:

«Հողդարը» կրթական խնդիրների լուծման գործում կարեւորում էր Սեբաստիայի Ս. Նշան մայրավանքում Սանասարեան վարժարանի մասնաճիւղ բացելու հանգամանքը[94]: Խմբագրութեան կարծիքով՝ այդ կրթօջախը կը կարողանար օգնել դուրս գալ կրթական յետամնաց վիճակից[95]: «Հողդարը» մաղթում էր, որ նորաբաց Սանասարեան դպրոցի ուսումնական ծրագրերը կազմուէին ազգային եւ եւրոպական լաւագոյն դպրոցների օրինակով ու «մանուկը եւ ուսանողը կրթէին հայը չի մեռցնելով իր մէջը»[96]:

Ազգային կրթութեան եւ դաստիարակութեան խնդիրներն օրակարգային եւ էական էին «Հողդարի» համար: Մինչեւ վերջին համարը թերթը քննարկել է այդ ոլորտի հիմնահարցերը եւ իր առաջարկներով ու դիտողութիւններով իրապէս նպաստել է Սեբաստիայի կրթական բարեփոխումներին: Բարեկամաբար եւ սրտացաւօրէն արուող քննադատութիւններն ու դիտողութիւնները հիմնականում ընդունւում եւ հաշուի էին առնւում: «Հողդարը» տպագրել է ազգային Արամեան վարժարանի տեսուչ Խաչատուր Կրտոտեանի՝ «Հողդարի» խմբագրին ասած հետեւեալ խօսքերը. «Սա նա տեղեր մի՛ քննադատէք դպրոցը. մեր դպրոցը կարծուածէն աւելի՛ օգտակար է եղած. կրնա՞ք մեր սա շրջանաւարտները բաղդատել ո եւ է շրջանաւարտի մը հետ օտար վարժարաններէն»[97]: Կ. Պարսամեանն ընդունել էր այս դիտողութիւնը, թէեւ այդ կարծիքը նա համարում էր չափազանցուած, բայց՝ կարեւոր ու ճշմարտացի[98]:

Կրթական խնդիրներին զուգահեռ՝ «Հողդարի» էջերում 1910-1914 թթ. կտրուածքով ամփոփուած է Սեբաստիայի մշակութային կեանքը: Մեր աչքերի առջեւ է յառնում Սեբաստիան իր մշակութային հետաքրքրութիւններով: Շաբաթաթերթի հրապարակումներից երեւում է, որ Սեբաստացիները թատերասէր էին: Քաղաքում բեմականացւում էին առաւելապէս հայ դրամատուրգների ստեղծագործութիւնները: Թատերախմբերը հովանաւորւում էին հնչակեան կուսակցութեան եւ ՀՅԴ-ի կողմից, թէեւ դաշնակցականներն աւելի ակտիւ էին այդ հարցում: «Դաշնակցութիւնը միայն կարող է իր ընկերները սերտօրէն կապել իրարու: Դաշնակցական ընկեր մը միայն իր ընկերոջը ցաւովը, տառապանքովը կը տապկուի»,- գրում էր թերթը[99]:

91 Նոյն տեղում, 1911, թիւ 10:
92 Նոյն տեղում:
93 Նոյն տեղում, 1912, թիւ 27:
94 Նոյն տեղում, 1912, թիւ 26:
95 Նոյն տեղում, 1912, թիւ 25:
96 Նոյն տեղում:
97 Նոյն տեղում, 1911, թիւ 28:
98 Նոյն տեղում:
99 Նոյն տեղում, 1911, թիւ 34:

Սեբաստիայում ներկայացումներով հանդէս էին գալիս ոչ միայն արհեստավարժ թատերախմբեր, այլեւ հայկական տարբեր կրթօջախների ուսանողների ջանքերով գործող թատերախմբեր: Օրինակ՝ «Քրոնիկ» բաժնի լուրերից մէկը տեղեկացնում էր, որ 1911 թ. փետրուարի 16-ին Սիւասում ձմեռային թատերաշրջանը բացուել էր կիրակնօրեայ վարժարանի ուսանողների կողմից «Ս. Դոմինիկ կղզու գերին» դրամայի ներկայացմամբ[100]: Տ. Կ.-ն գրում էր. «Դերակատարութեան մէջ ծիլը կար ապագայի խոստմնալիցութեան»[101]: Նա ներկայացման միակ թերութիւնը համարում էր այն, որ գլխաւոր հերոսուհու դերակատարը տղայ էր: «Ո՜հ, զարգացումը, մաքո՛ւր զարգացումը՝ թոյլատրէր մեզի ալ՝ փայլած տեսնել նոյն բեմին վրայ հայ-իգական սեռի կարողութիւնն ալ»,- իր դիրքորոշումն էր ներկայացնում «Հողդարը»[102]: Ընդհանրապէս «Հողդարը» դէմ էր կանանց դերերը տղամարդկանց կողմից ներկայացնելուն, բայց հաւանում էր վերջինների խաղը: Թերթն այս առումով առանձնացնում էր դերասան Սահակեանին. «Պրն. Սահակեան անսգիւտ կարողութիւն մունի Շիրվանզադէի կնօջական թիփերուն յոյզերը, պաղատանքները արտայայտելու»[103]: «Հողդարը» վերլուծական յօդուածներից մէկում, անդրադառնալով Սեբաստիայում Ա. Ասլանենցի եւ Ա. Զկամեանի թատերախմբերի կողմից Շիրվանզադէի «Կործանուածը» դրամայի բեմականացմանը, կարծում էր, որ Շիրվանզադէն չէր ամաչի, եթէ ներկայ գտնուէր իր այդ «բարդ, կնճռոտ, խառնակ բիեսի ներկայացումին. ամէն դեր՝ անթերի՜» էր[104]: Թերթը տեղեկացնում էր, որ Զկամեանի թատերախումբն «արժանի ծափեր էր խլել» Շիրվանզադէի «Եւգինէ» դրամայի ներկայացմամբ, իսկ նոյն թատերախմբի կողմից բեմադրուած «Կործանուածը» դրաման եւ թատերախումբն ինքը «պատիւ կը բերեն բիեսի մեծանուն հեղինակին, իսկ մեզ՝ հպարտութիւն»[105]:

1911 թ. փետրուարի 18-ին Տ. Կ.-ն տեղեկացնում էր, որ Սիւասի Ազգային լսարանում Ազգային ընդհանուր շրջանային միութեան նախաձեռնութեամբ տեղի էր ունեցել գրական-թատերական գիշերոյթ[106]: Նա գրում էր, որ «զուտ գրական կտորներ հանուեցան բեմ», թէեւ՝ ոչ այնքան վարպետօրէն: Հանդէսին փայլ էր տալիս միայն պարոն Անդրանիկը միմոսի դերով: «Ե՞րբ պիտի զգանք պէտքը արուեստասէր դերակատարներու կազմութեան մը, ո՞վ պիտի շղթայէ, զօդէ՝ հոսհոն երեւցող բնածին յատկութիւնները դերակատարի». այս հարցադրումներն էր բարձրաձայնում «Հողդարի» թղթակիցը[107]:

Վերլուծականներից մէկում «Հողդարը» բարձր գնահատականների էր արժանացնում Սեբաստիայում գործող Արամ Ասլանենցի թատերախմբին եւ խմբի դերակատարուհուն, որի անունը թերթն այդպէս էլ չի նշել: Այդ դերակատարուհու մասին «Հողդարը» գրում էր. «Աս քանի՛ հեղ է՝ բեմ կը հանուի ան, ու մի՛շտ սրտաբաց ընդունելութեան կ'արժանանայ»[108]: Շաբաթաթերթի համոզմամբ՝ գաւառներում թատրոն գնալուց նախընտրելի բան չկար[109]: Սեբաստիա քաղաքում ներկայացումները հիմնականում տեղի էին ունենում Ազգային լսարանում: Ընդմիջումներին հանդէս էին գալիս սանթուրահար Արթինը եւ ջութակահար-երգիչ Տիգրան Խո-

100 Նոյն տեղում, 1911, թիւ 15:
101 Նոյն տեղում:
102 Նոյն տեղում:
103 Նոյն տեղում, 1912, թիւ 11:
104 Նոյն տեղում:
105 Նոյն տեղում, 1912, թիւ 5:
106 Նոյն տեղում:
107 Նոյն տեղում:
108 Նոյն տեղում, 1911, թիւ 16:
109 Նոյն տեղում:

րիկեանը: Թատերական ներկայացումներն առաւելապէս կազմակերպւում էին ի նպաստ այս կամ այն վարժարանի: Օրինակ՝ 1911 թ. փետրուարի 17-ին Ա. Ասլանենցի թատերախումբը Ազգային լսարանում հանդէս էր եկել «Հայրենիքի սէրը» ներկայացմամբ՝ որպէս զօրակցութիւն Սեբաստիայի Ազգային վարժարանի[110]: Ա. Ասլանենցի թատերախմբի մէկ այլ՝ «Բռնի ամուսնութիւնը» ներկայացումը կազմակերպուել էր որպէս նպաստ Սեբաստիայի Արամեան վարժարանի[111]: Հասոյթը յատկացուելու էր այդ կրթօջախի համար նստարաններ գնելուն: Խմբագրութիւնը ծափահարում էր դերասանական խմբի անթերի խաղին եւ պարսաւանքի էր ենթարկում ազգային մարմինների այն ներկայացուցիչներին եւ այն ուսուցիչներին, ովքեր չէին եկել դիտելու ներկայացումը[112]: Թերթը ցանկանում էր թատերական դահլիճներում տեսնել «քաղաքիս ամբողջ «Հայութիւնը»[113]: Իր վերլուծականները այնպիսի ոգեւորութեամբ ու սիրով էր գրում «Հողդարը», որ այդկերպ կարողանար ներկայացումները դիտելու ցանկութիւն արթնացնել ընթերցողների սրտերում: Ասենք՝ պատմելով Ա. Զկամեանի թատերախմբի կողմից «Մարուող ճրագներ» պիեսի ներկայացման վարպետութեան մասին, գրում էր. «Սա տողերը խազխազած պահուս իսկ խաղին ազդեցութեանը տակն եմ. անչափ կենդանի էին պատկերները»[114]:

Թատերական կեանքը լուսաբանելուն զուգահեռ՝ «Հողդարը» «Քրոնիկ» բաժնում որպէս լուր ներկայացնում էր Սեբաստիայի մշակութային անցուդարձի կարեւոր իրադարձութիւնները: Օրինակ՝ 1912 թ. օգոստոսի 25-ին «Քրոնիկ» բաժնի լուրը տեղեկացնում էր, որ Սեբաստիայում բեմադրուելու էր «մեր ամէնատաղանդաւոր երգահան Տ. Զուխաջեանի «Լէպլէպիճի Հօրօրը» օպերան», որն արդէն առինքնել էր Կ. Պոլսի գեղարուեստասէրների հիացումը[115]: Բերենք այլ օրինակ: Շաբաթաթերթում տպագրուած է «մեծանուն եւ հեղինակաւոր» ճարտարապետ Թորոս Թորամանեանի սրտագին շնորհակալութեան խօսքը, որը նա ուղղել էր Սեբաստիայի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսին[116]: Վերջինս Թորամանեանին էր ուղարկել Սեբաստիայի Ս. Նշան վանքի յատակագծերը: Դրանք հետաքրքրել էին անուանի ճարտարապետին եւ նրան համոզել էին եւս մէկ անգամ, որ «գաղթական հայութիւնը շատ բան տարեր է իրեն հետ բիւզանդական տիրապետութեան սահմանները: Եւրոպական գիտնոց խուզարկութիւնները արդէն քանի մը տարիէ ի վեր վերջնականապէս հաստատած են, որ ներքուստ կիսաբոլորակ վերջաւորութեամբ թեւերով խաչաձեւ եկեղեցիներու յատակագծերը հայկական ստեղծագործութիւն են»[117]:

Գրական ստեղծագործութիւնները ցաք ու ցրիւ են «Հողդարի» էջերում: Շաբաթաթերթը հիմնականում 1-ին էջում տպագրում էր արեւմտահայ գրողներից ընտրած մէկ բանաստեղծութիւն կամ հատուածաբար զետեղում էր նրանց արձակ գործերից: Ուշագրաւ է այն, որ արեւմտահայերէն թարգմանութեամբ եւ հայատառ թուրքերէնով «Հողդարը» տպագրել է Սեբաստիայի կուսակալ Մեհմեդ Էմինի բանաստեղծութիւններից[118]:

Թերթը խրախուսում էր նորաթուխ բանաստեղծներին: Նրանցից մէկի՝ Փայէլ

110 Նոյն տեղում:
111 Նոյն տեղում, 1912, թիւ 4:
112 Նոյն տեղում:
113 Նոյն տեղում, 1912, թիւ 31:
114 Նոյն տեղում:
115 Նոյն տեղում, 1912, թիւ 29:
116 Նոյն տեղում, 1911, թիւ 45:
117 Նոյն տեղում:
118 Տե՛ս «Հողդար», 1910, թիւ 1, 1910, թիւ 6, 1911, թիւ 16:

Փարլագեանի «Իմ ուխտը» բանաստեղծութիւնը «Հողդարը» տպագրել էր Դ. Վարուժանի հետեւեալ մեկնաբանութեամբ. «Հողդարին կը յանձնեմ այս քերթուածը՝ զոր խպնոտ ձեռքով մը ինծի ներկայացուց նորընծայ քերթողը: Մասուրի վարդ մը, որ բուրաստանի մը զարդը պիտի ըլլայ արուեստի պատուաստումով: Բնածին տաղանդի մը հեռանկարը կայ հոն: Գարժէ նուագել ան լուսնին տակ, սազի վրայ»[119]:

Դ. Վարուժանը «Հողդարի բլրակին» արձակ բանաստեղծութեան միջոցով փորձել է բնութագրել թէ՛ Սեբաստիայի Հողդար բլրակն ու դրա ստորոտում գտնուող համանուն թաղամասը, թէ՛ «Հողդար» շաբաթաթերթի կատարած հայապահպան աշխատանքը: Մէջբերենք ամենաբնորոշ հատուածը. «Քու համեստ բարձունքիդ վրայ կանգնած կ'ունկնդրեմ անմահութեան երգը չորս բուրումնաշունչ հովերուն, չորս հովերուն՝ որոնք ցորեաններու ծովերը յուզելով կ'ուգան մազերուս մէջ նուագել տրտունջը հայրենի աւերումին եւ փառքը աստղապսակ Մարդուն՝ որուն օրոցքը օրօրուեցաւ քու մէկ բարի հիւղակիդ մէջ: ՀՈՂԴԱՐԻ ճրագը ԱՐԱՐԱՏԻ արեւը եղաւ»[120]: «Հողդարի» դերը թերեւս չափազանցուած է, բայց Սեբաստիայում 1910-1914 թթ. այդ շաբաթաթերթը վայելել է ժողովրդի յարգանքն իր անկաշառ եւ անկեղծ հայրենասիրութեամբ տոգորուած հրապարակումներով ու հայ կուսակցութիւնների միջեւ կամրջող օղակ դառնալու մղումով: Իրականում «Հողդարը» հէնց այդպէս է վարւում: Քաղաքական կեանքի անցուդարձը թերթում թռուցիկ լուրերի տեսքով էր տրւում, եւ յօդուածների մէջ հիմնականում անդրադառնում էին բուն Սեբաստիայում կատարուող տեղաշարժերին, տեղի ազգային մարմինների աշխատանքին:

Հասարակական-քաղաքական կեանքին վերաբերող նիւթերը մեծ մասամբ զետեղւում էին «Թղթակցութիւն» եւ «Քրոնիկ» բաժիններում: Դրանք տեղեկացնում էին Սեբաստիայում հայերի հանդէպ իրականացուող բռնութիւնների, ալան-թալանի եւ ջարդի ու սպանդի մասին: Զիլէի սեփական թղթակիցը 1911 թ. փետրուարի 8-ին վկայում էր, որ շարունակւում էին բռնակալութեան շրջանի արարքները[121]: Նա պատմում էր, թէ ինչպէս էին տեղի թուրքերը, «Դուք կէաւուր էք» եւ «Կէաւուրը կրօնքիս հայհոյեց» ասելով, ծեծկռտուքի մէջ ներքաշում հայերին[122]:

Խմբագրութեան ստացած նամակներից մէկում Ղազիմաղարա գիւղի թաղական խորհրդից տեղեկացնում էին, որ 1914 թ. նոյեմբերի 20-ին տեղի թուրք ոստիկանը թոյլ չէր տուել գիւղի գղիր Համբարձում Գալստեանին կատարել իր պարտականութիւնները եւ, գաւազանով ծեծելով նրան, մահուան դուռն էր հասցրել: Այդ մասին տեղեակ էին պահել պետական պատկան մարմիններին, բայց մեղաւորը մնացել էր անպատիժ[123]:

«Հողդարը» պարզաբանում էր, որ Սեբաստիայում ծեծ ու ջարդից, բռնութիւնից բացի՝ հայութիւնը ենթարկւում էր նաեւ տնտեսական հալածանքի: Տեղացի թուրք վաճառականներն ու առեւտրականները ամէն ջանք գործադրում էին, որ թուրք ազգա- բնակչութիւնը գնումներն իրենց վաճառասրահներից կատարէր՝ բոյկոտելով հայերի խանութները: Նրանք անդամ մտնում էին հայերի խանութները եւ դուրս էին հանում թուրք գնորդներին[124]:

Եթէ 1910 թ. «Հողդարը» գրում էր, որ օսմանեան սահմանագրութիւնը հայերի

119 Նոյն տեղում, 1911, թիւ 19:
120 Նոյն տեղում, 1911, թիւ 23:
121 Նոյն տեղում, 1911, թիւ 14:
122 Նոյն տեղում:
123 Նոյն տեղում, 1914, թիւ 41:
124 Նոյն տեղում:

միջից հանել էր կոտորուելու վախը[125], ապա 1914 թ. թերթի հրապարակումներից հասկանալի էր դառնում, որ սեփական իրաւունքները թէկուզ Թուրքիայի խորհրդարանում պաշտպանելու եւ այնտեղ իրենց թուաքանակին համապատասխան հայ երեսփոխաններ ունենալու պարագայում անդամ կար կոտորածների վերսկսման վտանգը: Թերթն ամսուայ մէջ առնուազն 2-3 յօդուած ունէր ինքնապաշտպանական զինավարժութիւնների կարեւորութեան մասին: Այդ նիւթերում քօղարկուած ձեւով էր ներկայացւում խնդիրը: Օրինակ՝ Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից «Հողդարն» արտատպել էր նիւթ, որը տեղեկացնում էր ՀՅԴ Թեհրանի մարմնի կողմից ինքնապաշտպանական խմբերի ստեղծման մասին, ընդ որում՝ նշւում էր, թէ դրանք պատրաստ էին հարկ եղած դէպքում սլանալ՝ հայ հասարակութեանը պաշտպանելու համար[126]: Մէկ այլ նիւթում, գուժելով Եփրեմ Խանի մահը, «Հողդարը» կրկին գովերգում էր զինուած պայքարը. «Ան հայութեան պարծանքը ու Դաշնակցութեան փառքն էր»[127]: «Պանծալի սուգ մը սակայն՝ երանի՜ թէ տասնեակներով Եփրեմներ կարենային սգալ»[128]:

«Ազգը կը յուզուի» խմբագրականում, ներկայացնելով Մուշի եւ Վանի շրջաններում հայերի կոտորուելու բազմաթիւ փաստեր, քննադատում էր կառավարութեանը եւ առաջարկում զէնք բաժանել ժողովրդին, որպէսզի պաշտպանուէր երկրի անդորրը[129]: «Հայը կը խողխողուի օրը ցերեկով, կը թալանուի, կ'առեւանգուի՝ քաջալերուելով տիրող ըէժիմի ընթացքէն... Ալ չենք կրնար խոստումներով օրօրուիլ, գործ կ'ուզենք, ազդեցութիւն կ'ուզենք, քանի որ դեռ շատ ուշ չէ, քանի որ աս դրութենական սպանութիւնները համայնական կոտորածի մը բնոյթը առնել են սկսած»[130],- յիշատակում էր «Հողդարը» Կ. Պոլսի հայոց ազգային երեսփոխանների խօսքերը:

1912 եւ 1914 թուականներին թերթը քաղաքական հնչերանգ էր ստացել, երբ Սեբաստիայում, ինչպէս ողջ Օսմանեան Թուրքիայում, նախապատրաստւում էին խորհրդարանական ընտրութիւններին: Այս շրջանում «Հողդարը» իւրաքանչիւր համարում մէկ-երկու հրապարակում էր նուիրում ընտրութիւնների թեմային՝ սատարելով ՀՅԴ-ի թեկնածուներին:

1914 թ. «Հողդարը» ներկայացնում եւ պաշտպանում էր Պատրիարքարանի դիրքորոշումը օսմանեան խորհրդարանական ընտրութիւնների եւ հայ թեկնածուների վերաբերեալ: 1914 թ. թերթի քաղաքական հայեացքներն աւելի պարզորոշ եւ սուր էին դարձել՝ խմբագիր Հ. Փոլադի գալով: «Հողդարը» քննադատում էր ապազգային կամ կեղծ ազգասէր հայ գործիչներին: Երբ 1912 թ. ՀՅԴ-ն ցուցաբերում է չէզոք դիրքորոշում, «Հողդարը» քննադատում է նաեւ իր համակրած կուսակցութեանը: «Դաշնակցութիւնը չուզեր ճակատաբացորէն մխուիլ պայքարին մէջ՝ վախենալով գուցէ թէ պիտի պարտուի - այլ կ'ուզէ «չէզոք»ին օժանդակել: Չէզոքը, մշտերթ, անկայուն ամբո՛խը ատ: Կ'անտեսեմ անգամ իր գոյութիւնը»,- գրուած էր «Պայքար» խմբագրականում[131]: Իսկ «Չէզոքը» խմբագրականում չէզոքից վնասակար տարր չէին պատկերացնում: Ըստ թերթի՝ «չէզոք» նշանակում էր ճահճացած ջուր, որից անտարբերութեան գարշահոտ էր փչում[132]: «Հողդարը» կուսակցութիւննե-

125 Նոյն տեղում, 1910, թիւ 2:
126 Նոյն տեղում, 1911, թիւ 38:
127 Նոյն տեղում, 1912, թիւ 20:
128 Նոյն տեղում, 1912, թիւ 30:
129 Նոյն տեղում:
130 Նոյն տեղում, 1912, թիւ 21:
131 Նոյն տեղում, 1912, թիւ 14:
132 Նոյն տեղում, 1912, թիւ 17:

րին էր դիմում կոչով, որ իրենց շարքերում վերացնէին չէզոքներին[133]:

1912 թ. 5-րդ համարից սկսած շաբաթաթերթը մեծ տեղ էր յատկացնում օսմանեան երեսփոխանական ընտրութիւնների գործընթացի, այդ ընտրութիւնների գործը համակարգող Համազգային մասնախմբի աշխատանքների լուսաբանմանը եւ թեկնածուների ներկայացմանը: Հակակրանքով էր խօսում Իթթիհատի թեկնածու դարձած Արմենակ Խորիկեանի մասին, ում չէր համակրում նաեւ հայութիւնը: «Թեկնածուները» խմբագրականում Կ. Պարսամեանը գրում էր, որ իր ձայնը տալու էր այն թեկնածուին, ով «արիւնքամ պահերուն անայլայլ յեղափոխականը մնաց, որուն նկարագիրը այդ բովէն անբասիր անցաւ»[134]: «Հողդարը» պաշտպանում էր հայ թեկնածուներից նրան, ով հարստութեան տիրանալու նպատակով չէր զրկել ազգակիցներին, ով մտահոգուել էր հայկական գիւղերի վիճակով, ով հետաքրքրուել էր ազգային դպրոցով ու մշակոյթով: Թերթի համար թանկ էր այն թեկնածուն, ով անվախօրէն պաշտպանում էր ճշմարտութիւնը եւ չունէր շահադիտական նկրտումներ[135]: 1914 թ. օսմանեան խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ «Հողդարը» վերոյիշեալ տեսակէտներն ունէր պատգամաւորութեան թեկնածուների վերաբերեալ: Աւելացել էր մէկ պայման-պահանջ. թերթը հայ ընտրողներին կոչ էր անում պաշտպանել Պատրիարքարանի արդար պահանջները եւ չմասնակցել այդ ընտրութիւններին, եթէ «չընդունուին այդ պահանջները»[136]: «Հողդարը» տեղեկացնում էր, որ այդպէս էին վարուել Թոքատում,[137] Ամասիայում[138]: Ամասիայից «Հողդարի» թղթակիցը պատմում էր, որ, հակառակ կառավարութեան խիստ հրահանգներին, հայերը չէին մասնակցել օսմանեան խորհրդարանի պատգամաւորական ընտրութիւններին եւ, բացի այդ, պահանջուող 2 անձանց չէին տրամադրել՝ քուէատուփերը հսկելու համար: Նրանք իրենց այսօրինակ վարքագիծը հիմնաւորել էին հետեւեալ կերպ. «Իրենք ընտրական աս մէկ գործին չէին կարող մասնակցել, քանի որ Պատրիարքարանի ձայնը անլսելի մնաց եւ Հայութիւնն ամբողջ նախատուեցաւ իր արդար պահանջներուն համար»[139]: Թերթը տեղեկացնում էր, որ Ամասիայում ողջ հայ ազգաբնակչութիւնը չէր մասնակցել ընտրութիւններին[140]:

1914 թ. ընտրապայքարը եւ արեւմտահայութեան պահանջները «Հողդարի» հիմնական թեմաներն էին:

«Հողդարը» հայ ժողովրդի քաղաքական հասունութեան գործում էական էր համարում քաղաքական գործիչների հանդիպումները եւ կատարած քարոզչական աշխատանքը: Թերթը լուսաբանում էր մասնաւորապէս ՀՅԴ-ի նախաձեռնութեամբ անցկացուող այդ կարգի հանդիպումները: Առաջարկում էր որպէս քարոզիչներ նկատի ունենալ Դ. Վարուժանին եւ Սեբաստացի Մուրադին: Թղթակցութիւններից մէկում Շահնուրը գրում էր, որ Թոքատում մինչեւ Դ. Վարուժանի եւ Մուրադի հետ հանդիպումը ժողովուրդը չէր սիրել դաշնակցականներին, որովհետեւ նախորդ հանդիպումներում իրենց ներկայացած դաշնակցականների խօսքը կազմուած էր եղել «ցեխերէ, հայհոյութենէ եւ աղտոտութենէ»[141]: Շահնուրը հաւաստիացնում էր, որ Դ. Վարուժանի ամէն բառը մի բանաստեղծութիւն էր, իսկ խօսքի ամէն պարբերութիւնը՝ մի աւարտուն

133 Նոյն տեղում:
134 Նոյն տեղում, 1912, թիւ 5:
135 Նոյն տեղում:
136 Նոյն տեղում, 1914, թիւ 41:
137 Նոյն տեղում:
138 Նոյն տեղում, 1914, թիւ 42:

139 Նոյն տեղում:
140 Նոյն տեղում:
141 Նոյն տեղում, 1911, թիւ 43:

պատմութիւն: «Չի լացցուց մեզ, այլ վրէժխնդրութեան ոգին արթնցուց մեր մէջ: Հէ՛րիք, ըսաւ, ապրեցանք դարեր տեւող թմրութեան մէջ, ապրինք կեանք մը ասպետական՝ որով ապրեցան մեր նախահայրերը: Հայը, ըսաւ, մի մարտիրոս է, մի վկայ. ժանտ ձեռքեր ջախջախեցին իր գանկը, բայց նա կրցաւ ստեղծագործել, կոտրտեցին իր բազուկները, բայց նա իր ակռաներովը բացաւ իր սրտին ակօսները, նիզակներու, մարթիններու եւ եաթաղանի հարուածներով պատռեցին իր կուրծքը եւ ծակծկեցին ամբողջ իրանը եւ սակայն չի կրցան մեռցունել զինքը, որովհետեւ սիրտը կը բաբախէր տակաւին ա՛յնքան ուժգին, որքան մի առոյգ երիտասարդի մը սիրտը: Պիտի ապրի Հայը ցորչափ փարած է նա իր գրչին, իր բահին եւ իր զէնքին»,- վերապատմում էր Շահնուրը[142], ում կարծիքով՝ Վարուժանը հայ ժողովրդի ապագայի հանդէպ անկոտրում հաւատ ունէր[143]:

1914 թ. «Ցեղին Նոր տարին» խմբագրականում «Հողդարը» գրում էր, որ որքան էլ անցնող տարիներն արիւն էին փսխում ցեղի ճանապարհի վրայ եւ մոխիր էին ցրցքնում նրա ոտքերի առջեւ, դրանք ըմբոստութեան կայծեր էին արթնացնում ցեղի սրտում. «Քալէ՛ց- քալէ՛ց Ցեղը արիւնի ու մոխիրի արահետներէն, միշտ խիզախ, միշտ կանգուն, միշտ հպարտ ու միշտ սպասելով Նոր յոյսերու, Նոր Տարիին»[144]:

142 Նոյն տեղում:
143 Դ. Վարուժանը Սեբաստիայի պարծանքն էր. «Քաղաքը ամբողջ՝ պաշտամունք ունէր իրեն հանդէպ: Դիր իր անունը ո եւ է յայտագրի մէջ, եւ քաղաքը ամբողջ կը խռնուի հոն: Ինք, սիրտբաց, անձնուէր, կ'եղբայրակցէր ամէնուն հետ» (տե՛ս «Հողդար», 1911, թիւ 34):
144 Նոյն տեղում, 1914, թիւ 41: